IHSS
IN-HOME SUPPORTIVE SERVICES
ELECTRONIC SERVICES PORTAL



# Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգ(ESP)

# Լրացուցիչ Ինքնասպասարկման Ծառայություններ՝

# Ուղղակի Ավանդ և Հիվանդության Պատճառով Բացակայություն

www.etimesheets.ihss.ca.gov





Լրացուցիչ օգնության համար խնդրում ենք դիմեք IHSS-ի Ծառայության Բաժին՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, Երկուշաբթիից – Ուրբաթ, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը: Ընտրեք Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգի (Պորտալի) տարբերակը՝ ESP ծառայության բաժնի ներկայացուցչի հետ խոսելու համար:

Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգն(ESP) իր մեջ ներառում է գլխավոր ցանկ, որը թույլ է տալիս մատակարարներին մուտք գործել ինքնասպասարկման ծառայություն, ինչպիսիք են՝ Ուղղակի Ավանդին գրանցվելը և Հիվանդության պատճառով բացակայության համար հայց ներկայացնելը: Այս ինքնասպասարկման ծառայություններից օգտվելու համար մատակարարը նախ պետք է մուտք գործի իր ESP հաշվին:

**Մուտք գործել ESP**

Սկսելու համար Դուք պետք է մուտք գործեք ESP՝ օգտվելով այս հղումից. www.etimesheets.ihss.ca.gov

Դուք պետք է օգտագործեք Ձեր **օգտանունը** և **գաղտնաբառը**, որ ստեղծել էիք գրանցման գործընթացի ժամանակ: Ձեր օգտանունը և գաղտնաբառը գաղտնի պահեք և մի հայտնեք որևէ մենին: Մուտքագրեք Ձեր օգտանունը և գաղտնաբառը, ապա սեղմեք "Մուտքագրում" կոճակը, Ձեր հաշվին մուտք գործելու համար:

**Նշում.** ESP-ին հասանելի է չորս լեզուներով՝ անգլերեն, իսպաներեն, չինարեն և հայերեն: Օգտատերը կարող է ընտրել իր նախընտրելի լեզուն նախքան մուտք գործելը:




**Note:** Եթե Ձեր օգտանունը կամ գաղտնաբառը 5 անգամ անընդմեջ սխալ եք մուտքագրում, ապա Ձեր հաշիվը կարգելափակվի, և Դուք պետք է դիմեք Աջակցության Բաժին, հետևյալ հեռախոսահամարով՝ (866)376 -7066: Եթե մուտք գործելու ժամանակ չեք հիշում Ձեր օգտանունը կամ գաղտնաբառը, ընտրեք մոռացել եմ օգտանունը կամ գաղտնաբառը հղումը՝ գաղտնաբառի վերականգնման հղումը ստանալու համար:

## Գլխավոր էջը

Մուտք գործելուց հետո, գլխավոր էջի վերևամասում, Դուք կտեսնեք հորիզոնական սանդղակ:




Որպես մատակարար, բացի Ձեր ժամացուցակները ներկայացնելուց, կարող եք նաև կատարել հետևյալը՝ օգտագործելով Ձեր հաշիվը.

<u>Ուղղակի Ավանդի Հայցեր.</u>

- Առցանց ներկայացնել Ուղղակի Ավանդի Հայցը:
- Գրանցվել, փոխեք կամ դադարեցրեք Ձեր Ուղղակի Ավանդը:
- Վերանայել Ուղղակի Ավանդի հայցերի պատմությունը:
- Մուտք գործել կարդալու Ուղղակի Ավանդի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերը:

<u>Հիվանդության Պատճառով Բացակայության Հայցեր.</u>

- Ներկայացնել Հիվանդության Բացակայության հայցը
- Վերանայել Հիվանդության Բացակայության հայցերի պատմությունը
- Մուտք գործել կարդալու Հիվանդության Բացակայության վերաբերյալ հաճախակի տրվող հարցերը:

## Ուղղակի Ավանդի Հայցեր

ESP- ից օգտվելու համար, Դուք այժմ կարող եք գրանցվել Ուղղակի Ավանդի համար և Ձեր աշխատավարձն անմիջապես կփոխանցվի Ձեր բանկային հաշվի համարին: Դուք պետք է ունենաք Ձեր բանկի հաշվեհամարը և բանկի ինքնությունը հաստատող համարը(routing number) ESP մուտք գործելու համար:

Ուղղակի Ավանդին գրանցվելու համար, ESP-ի գլխավոր էջի վերևում գտնվող հորիզոնական սանդղակից պետք է ընտրեք Ուղղակի Ավանդ տարբերակը:




Այն Ձեզ համար կբացի երեք սպասարկման տարբերակները. Սկսել Ուղղակի Ավանդի Ընթացքը, Ուղղակի Ավանդի Հայցեր, Հաճախակի տրվող հարցեր Ուղղակի Ավանդի վերաբերյալ:

Ընտրեք «Սկսել Ուղղակի Ավանդի Ընթացքը» տարբերակը գործողություններ կատարելու համար:




Դուք կհայտնվեք Ուղղակի Ավանդ – Ընտրեք Ձեր Ուղղակի Ավանդի Տարբերակը էկրանին: Այս էջի վրա Դուք պետք է ընտրեք այն ծառայության տեսակը, որից ցանկանում եք օգտվել. Նոր, Փոխել կամ Դադարեցնել:




Ընտրեք **Նոր**՝ Ուղղակի Ավանդին գրանցվելու համար, **Փոխել**՝ Ձեր բանկային հաշիվը փոխելու համար, կամ **Դադարեցնել**՝ Ուղղակի Ավանդը չեղյալ համարելու համար: Նկատի ունեցեք, որ հարկավոր են Ձեր բանկային հաշվի տվյալները՝ նոր պահանջ ներկայացնելու կամ գոյություն ունեցող Ուղղակի Ավանդը փոխելու համար:

Ընտրեք «Ուղղակի Ավանի Հայցեր» տարբերակը, Ձեր ներկայացրած Ուղղակի Ավանդի հայտերի՝ **ՆՈՐ, ՓՈԽԵԼ** կամ **ԴԱԴԱՐԵՑՆԵԼ** պատմությունը տեսնելու համար:




Երբ սեղմեք կապույտ սլաքն, այն կընդլայնվի և կտեսնեք յուրաքանչյուր բաժնի տվյալները:




**Նշում.** Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ձեր **ՆՈՐ** և **ՓՈԽԵԼ** հայցերի ընթացքը կարող է տևել մինչև 30 օրացուցային օր, իսկ **ԴԱԴԱՐԵՑՆԵԼ** հայցը՝ 5 աշխատանքային օր, սկսած Ձեր դիմած օրվանից հետո:

**Նշում.** Դուք պետք է շարունակեք ներկայացնել Ձեր ժամացուցակները, մինչ սպասում եք Ողղակի Ավանդի գործընթացը սկսելուն: Ձեր Ուղղակի Ավանդի գրանցման ընթացքը և օգտագործումը չի փոխում Ձեր ժամացուցակները ներկայացնելու ձևը:

Ընտրեք Հաճախակի տրվող հարցեր Ուղղակի Ավանդի վերաբերյալ տարբերակը և կտեղափոխվեք այն էջի վրա, որտեղ կարող եք գտնել Ձեզ հուզող հարցերի պատասխանները:




## <u>Հիվանդության Պատճառով Բացակայության Հայցեր</u>

Եթե Դուք ունեք հասանելի ժամեր հիվանդության պատճառով բացակայության դեպքում օգտագործելու համար, ապա կարող եք մուտ գործել Ձեր ESP հաշիվն առցանց և ներկայացնել հիվանդության բացակայության հայցը: Եթե ESP- ի միջոցով ներկայացնեք Ձեր հիվանդության բացակայության հայցը, ապա Ձեզ հարկավոր չի լինի վարչաշրջանից կամ CDSS- ի կայքէջից ծեռք բերել, լրացնել, փոստով ուղարկել և սպասել SOC 2302 դիմումածևի հաստատմանը:

Հիվանդության պատճառով բացակայության հայցը ներկայացնելու համար, ESP-ի գլխավոր էջի վերևում գտնվող հորիզոնական սանդղակից պետք է ընտրեք Հիվանդության Բացակայության Հայց տարբերակը:




Այն Ձեզ համար կբացի երեք սպասարկման տարբերակներ. Սկսել Հիվանդության Բացակայության Հայցը, Հիվանդության Բացակայության Հայցի Պատմություն, Հաճախակի տրվող հարցեր հիվանդության պատճառով բացակայության վերաբերյալ:




Ընտրեք «Հիվանդության Բացակայության Հայց» տարբերակը Ձեր հայցը ներկայացնելու համար: Հիվանդության պատճառով բացակայության հայց էկրանի վրա Դուք կտեսնեք Ձեր հասանելի ժամերը, որ կարող եք պահանջել. նաև կարող եք տեսնել նախկինում հայցված ժամերը: Ձեր հայցը հաջողությամբ ներկայացնելու համար, Դուք պետք է այդ էջի վրա ընտրեք վճարման ժամանակահատվածը և այն ստացողին, ում համար ցանկանում եք ժամեր ներկայացնել/պահանջել:

**Նշում.** Եթե հիվանդության բացակայության ժամերի վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ դիմել Պետական Մարմիններին՝ օգնության համար:




Ընտրեք «Հիվանդության Բացակայության հայցի Պատմություն» տարբերակը, Ձեր ներկայացրած հայցերի պատմությունը տեսնելու համար:




Այդ էջի վրա Դուք կարող եք տեսնել Ձեր ներկայացրած բոլոր հայցերի պատմությունը: Նշված օրինակում հիվանդության բացակայության ժամեր չեն պահանջվել / ներկայացվել անցյալում:




**Նշում.** Դուք կստանաք Ձեր հիվանդության բացակայության ժամերի վճարն առանձին աշխատավարձի տեսքով: Իսկ եթե Դուք գրանցված եք Ուղղակի Ավանդի ծառայությանը, ապա հիվանդության բացակայության վճարը կուղարկվի ուղղակի ավանդի միջոցով:

Ընտրեք ‘Հաճախակի տրվող հարցեր Հիվանդության պատճառով բացակայության վերաբերյալ’ տարբերակը և կտղափոխվեք այն էջի վրա, որտեղ կարող եք գտնել Ձեզ հուզող հարցերի պատասխանները:




## Հիշեցումներ Հիվանդության Բացակայության վերաբերյալ.

- Դուք միայն կարող եք պահանջել վճարովի բացակայության ժամ այն դեպքում, եթե արդեն վաստակել եք այդ ժամերը: Ձեր հիվանդության բացակայության հասանելի ժամերը Դուք կարող եք տեսնել Ձեր աշխատավարձի թերթիկի վրա կամ Հիվանդության Բացակայության հայցը Էկրանի վրա:

- Դուք կարող եք օգտագործել այս վճարովի բացակայության ժամերը Ձեր համար, եթե հիվանդ եք կամ երբ Ձեր ընտանիքի անդամներից մեկը հիվանդ է և կարիք ունի բժշկի գնալու:
- Եթե Դուք օգտագործելու եք վճարովի բացակայության ժամ և նախօրոք գիտեք այդ բացակայության մասին, ապա պետք է Ձեր ստացողին տեղյակ պահեք առնվազն **48 ժամ առաջ**:
- Եթե Դուք օգտագործելու եք վճարովի բացակայության ժամ և նախօրոք չգիտեիք այդ բացակայության մասին, Դուք պետք է տեղյակ պահեք Ձեր ստացողին **անմիջապես կամ առնվազն երկու (2) ժամ առաջ**:
- Եթե դիմում եք վճարովի բացակայության համար, Դուք պետք է առնվազն մեկ ժամ վճարովի բացակայության ժամ վերցնեք, հետո միայն կարող եք վերցնել նաև լրացուցիչ 30 րոպե (կես ժամ): Անհրաժեշտության դեպքում կարող եք օգտագործել Ձեր ամբողջ ժամերը: